

Հաստատում եմ՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի

ռեկտոր, մ. գ. դ. Ա. Ծատուրյան

06 մարտի, 2026 թ.



ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Սրբա Կոստանյան Սիմոնյանի՝

«Հարադրավոր բայերը ժամանակակից հայերենում և անգլերենում (Ջուգադրական քննություն)» ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների և գրականության ամբիոնների համատեղ նիստում (04.03.2026 թ., արձ. թիվ 11) բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին ամբիոնների անդամներից 19-ը՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, Բ. գ. թ., դոցենտ Հ. Բաբուռյանը, օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ, Բ. գ. թ., դոցենտ Թ. Թադևոսյանը, Բ. գ. դ., պրոֆեսոր Գ. Խաչատրյանը, Բ. գ. դ., պրոֆեսոր Թ. Շահվերդյանը, Բ. գ. թ., դոցենտ Դ. Գյուլգատյանը, Բ. գ. թ., դոցենտ Շ. Ղուկասյանը, Բ. գ. թ., դոցենտ Վ. Փիլոյանը, Բ. գ. թ., դոցենտ Գ. Հովիվյանը, Բ. գ. թ., դոցենտ Գ. Պապյանը, Բ. գ. թ., դոցենտ Տ. Դանիելյանը, Բ. գ. թ., Բ. Ղազարյանը, Բ. գ. թ., դոցենտ Հ. Հարությունյանը, Բ. գ. թ., դոցենտ Ա. Սարուխանյանը, Բ. գ. թ., Հ. Խաչատրյանը, Բ. գ. թ., դոցենտ Լ. Վարդանյանը, դասախոս Ս. Բարսեղյանը, դասախոս Ա. Փարեմուզյանը, դասախոս Ա. Հարությունյանը, դասախոս Է. Սարգսյանը:

ՀԼԳ ամբիոնի վարիչ Հ. Բաբուռյանը և ՕԼԳ ամբիոնի վարիչ Թ. Թադևոսյանը ներկայացրին ամբիոնների կողմից ձևավորված կարծիքները:

Ելույթ ունեցողները նշեցին, որ թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության և հապավումների ցանկից: Աշխատանքն ուղեկցվում է աղյուսակներով ու գծապատկերներով:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային և իմաստային

առանձնահատկությունները՝ բացահայտելու երկու լեզուների բառակազմական և իմաստաբանական համակարգերի միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, պարզաբանվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ներկայացվում են հետազոտության գիտական նորույթը, հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի ուսումնասիրության պատմությունը, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում («Ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի բնորոշումը և կառուցվածքային կաղապարները») ներկայացվում են հարադրավոր բայերի խմբերն ըստ ոչ բայական բաղադրիչների խոսքիմասային պատկանելության: Համեմատվող լեզուներում բայի հետ կարող են հարադրվել գոյականը, ածականը, թվականը, դերանունը, մակբայը, կապը, նախդիրը, ձայնարկությունը, դերբայը: Զուգադրական քննությամբ ներկայացվում են նաև ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի անվանական բաղադրիչների բառակազմական կաղապարները:

Ատենախոսն անդրադառնում է տարբեր խոսքի մասերով արտահայտված բաղադրիչներին: Համեմատաբար մանրամասն քննվել է գոյական բաղադրիչը՝ ըստ հարկի առանձնացնելով թանձրացական և վերացական, անձնանիշ և իրանիշ, եզակի և հոգնակի, ինչպես նաև տարբեր հոլովներով արտահայտված բաղադրիչները:

Ատենախոսը տիպաբանական մի քանի կարևոր դիտարկում է անում. ա) երկու լեզուներում էլ անձնանիշ գոյական բաղադրիչով հարադրավոր բայերը քիչ են (էջ 21), բ) հայերենի սեռական և անգլերենի ստացական հոլովներով բաղադրիչ հարադրավոր բայերի կազմում չի լինում (էջ 22), գ) քիչ են նաև թվական բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերը (էջ 24):

Բերվող օրինակները երբեմն ճիշտ չեն բնութագրում քննվող կաղապարը: Այսպես՝ *շուռ գալ*-ը համարվել է մակբայական բաղադրիչով բայ, մինչդեռ պետք է քննվեր առանձին կաղապարով՝ անկախ բառային գործածություն չունեցող բաղադրիչով հարադիրների շարքում, ինչպես՝ *կուլ տալ*, *թաք կենալ*, *ման գալ*: Այս կաղապարը ատենախոսը չի էլ առանձնացնում, մինչդեռ հայերենում դա առանձին

խումբ է՝ երկու ենթախմբով (տե՛ս Ալ. Մարգարյան, գրականության ցանկի 18-րդ աշխատությունը, էջ 102-104):

Բառակազմական կաղապարների քննությունը հիմնված է Լ. Հովսեփյանի կիրառած սկզբունքի վրա. առանձնացվում է 5 բառակազմական տարր և 32 բառակազմական կաղապար, որոնցից յուրաքանչյուրի համար բերվում են համապատասխան օրինակներ հայերենից և անգլերենից: Վերջում ասվածն ամփոփվում է աղյուսակով՝ ցույց տալով այս կամ այն կաղապարի առկայությունը կամ բացակայությունը հայերենում և անգլերենում: Քննվող կաղապարները հիմնավորված են բնութագրական օրինակներով: Սակայն կան մի քանի թերություններ:

Այսպես՝ Sf կաղապարում (հիմնական ձևայթ+քերականական մասնիկ) որպես տրական հոլովով բաղադրիչ ներկայացված են *ափին փալ, բկին կանգնել, թելին փալ, թղթին հանձնել, լեզվին փալ* օրինակները (էջ 28), մինչդեռ ոչ բայական բաղադրիչը նշված բայերում ունի երկու բառահարաբերական ձևայթ՝ *ի* և *ն* (բկ-ի-ն), ուստի և վերոբերյալ բայերը պետք է քննվեին Sff կաղապարի ներքո (էջ 29): Այն, որ սա վրիպակ չէ, և հեղինակը *ին*-ը մեկ հոլովակերտ է համարում, երևում է նաև 33-րդ էջի հետևյալ հատվածում. «Այս դեպքում f-ը հիմնականում տրական հոլովի *-ի, -ին* հոլովակերտ մասնիկն է»:

*Տանփրկինություն անել* բայը չի համապատասխանում SSa կաղապարին, քանի որ ոչ թե երկարմատ է, այլ եռարմատ՝ *փան-փի-կին-ություն*: *Ձեռքից-ուրքից ընկնել*-ը նույնպես չի համապատասխանում SfSf կաղապարին, քանի որ *ք*-ն ածանց է:

Ատենախոսության երկրորդ գլուխը («Երկբաղադրիչ բայական դարձվածքներ (ԵԲԴ) և հարադրավոր բայեր») նվիրված է ԵԲԴ-ների քննությանը ըստ ոչ բայական բաղադրիչի իմաստի. ԵԲԴ-ներ, որոնցում ոչ բայական բաղադրիչը վերաբերում է մարդու հոգեկան աշխարհին, մտավոր և ֆիզիկական կարողություններին, բնության տարբեր երևույթներին, կենդանական աշխարհին և սննդամթերքին: Ուսումնասիրվում են ԵԲԴ-ների բառային-բայական առանձնահատկությունները, բաղադրիչների ձևաբանական առանձնահատկությունները, փոխանցվում են ԵԲԴ-ների իմաստային ձուլվածության երեք աստիճան՝ դարձվածային սերտաճումներ, դարձվածային միասնություններ և դարձվածային կապակցություններ:

Եզրակացությունն այն է, որ երկու ժողովուրդների լեզվամտածողության հիմքում ընկած է մարդակենտրոն սկզբունքը, իսկ աշխարհի իրողությունները

պատկերավոր հենք են դառնում մարդկային բարդ հոգեվիճակներ ու սոցիալական հարաբերություններ պատկերելու համար (էջ 55-56):

ԵԲԴ-ների դասակարգումը կատարելով ըստ բաղադրիչների ձուլվածության աստիճանի՝ ատենախոսը հիմնականում հաշվի է առնում Վ. Վինոգրադովի տեսակետը և առանձնացնում է իմաստային ձուլվածության երեք աստիճան՝ դարձվածային՝ սերտաճում, միասնություն, կապակցություն: Մինչդեռ անհրաժեշտ էր հաշվի առնել (քանի որ համեմատվող լեզուներից մեկը հայերենն է) Ա. Սուքիասյանի հայտնի աշխատությունը, որում ի լրումն առանձնացվում է նաև չորրորդ տեսակ՝ դարձվածային արտահայտություն (տե՛ս Ա. Սուքիասյանի՝ գրականության ցանկում՝ 22-րդ կետում ներառված աշխատությունը):

Քննվել են նաև ԵԲԴ-ների բաղադրիչների ձևաբանական առանձնահատկությունները, ընդ որում հաշվի են առնվել հոդի գործածությունը, հոդով կամ առանց հոդի կիրառվելու դեպքում իմաստի հնարավոր փոփոխությունները, թվի և ժխտման արտահայտությունները:

Անորոշ հոդով գործածությունների շարքում ատենախոսը նշում է *մի աչք դառնալ*, *մի աչքով նայել* օրինակները, մինչդեռ դրանցում *մի*-ն թվական բաղադրիչ է և նշանակում է «մեկ» և ոչ թե «ինչ-որ»:

Նախդիր կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադիր բայերի քննությանն է նվիրված ատենախոսության երրորդ գլուխը, որը առաջին գլխում արդեն ներկայացված հատվածի (էջ 24) հետագա մանրամասնումն ու ճշգրտումն է: Տարակուսելի է միայն այն, որ ենթագլուխներից մեկը վերաբերում է հարադրավոր բայերի ուսուցմանը, նշվում են ուսուցման դժվարության պատճառները, բայց ոչինչ չի ասվում ուսուցումը հեշտ ու դյուրին դարձնելու քայլերի մասին:

Ատենախոսության մեջ առկա են, բացի վերոբերյալներից, այլ թերություններ ևս՝ կետադրական, ոճական, եզրակացությունների համարակալումը հերթական չէ, կան անհարկի կրկնություններ, բայց դրանք չեն ստվերում աշխատանքի արժանիքները:

Ատենախոսության մեջ կատարված աշխատանքը դրական արժևորելով՝ այնուամենայնիվ, կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ և ստանալ որոշ պարզաբանումներ:

1. Մեր գնահատմամբ՝ ատենախոսության գիտական նորույթը ընդհանրական է և բավարար կերպով չի հիմնավորում ատենախոսի կողմից բացահայտած «գիտական բացը»:
2. Որոշ եզրակացություններ ընդհանրական են (օրինակ՝ 1-ին և 6-րդ եզրակացությունները), իսկ մի քանիսում գրեթե նույն միտքն է կրկնվում (օրինակ՝ 5-րդ և 10-րդ եզրակացությունները):
3. Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի ուսուցումը») նշվում է, որ «անգլերենում որոշ կազմություններում ոչ բայական բաղադրիչը միշտ դրվում է բայից հետո, ինչպես՝ run into՝ «պատահաբար հանդիպել» հարադրավոր բայի դեպքում»: Սակայն հեղինակը չի անդրադառնում այս առանձնահատկության մանրամասներին և չի տալիս հիմնավորված բացատրություն: Արդյունքում ստեղծվում է տպավորություն, որ նման շարադասական կառուցվածքը վերաբերում է միայն into ոչ բայական բաղադրիչին, մինչդեռ այն գործում է նաև այլ ոչ բայական բաղադրիչների (օրինակ՝ at, for, after) դեպքում:


Կարծում ենք, որ նման գիտական բացերի առկայությունը գրեթե անխուսափելի է ցանկացած գիտական աշխատանքում, իսկ գրախոսվող աշխատանքում դրանք որակ չեն կազմում և չեն նսեմացնում Սոնա Սիմոնյանի կատարած գիտական հետազոտության արժեքը: Սույն ատենախոսությունը գիտական առումով արժեք ներկայացնող հետազոտություն է, ինչի շնորհիվ ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են սեղմագրում և ատենախոսի հրապարակումներում:


Ընդհանուր առմամբ աշխատանքում առաջ քաշված դրույթներն ու հիմնավորումները հիմնականում համոզիչ են: Հեղինակը ցուցաբերել է գիտական աշխատանքով զբաղվելու կարողություն, նրա կողմից իրականացված աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, և ատենախոսն արժանի է իր կողմից հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


ՀԼԳ ամբիոնի վարիչ Հ. Բաբոյանը և ՕԼԳ ամբիոնի վարիչ Թ. Թադևոսյանը, ելնելով ներկայացրած կարծիքներից, առաջարկեցին Սոնա Սիմոնյանի ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու հարցը դնել քվեարկության:

Քվեարկություն՝ 19 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշվեց, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կարգի պահանջներին, և Սոնա Կոստանտի Սիմոնյանն արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ:

ՎՊԿ-ի հայոց լեզվի և գրականության  
ամբիոնի վարիչ՝  Բ.Գ.Թ., դոցենտ Հ. Բաբոյան

ՎՊԿ-ի օտար լեզուների և գրականության  
ամբիոնի վարիչ՝  Բ.Գ.Թ., դոցենտ Թ. Թադևոսյան

Հ. Բաբոյանի և Թ. Թադևոսյանի ստորագրությունները վավերացնում են՝  
ՎՊԿ-ի գիտքարտուղի  մ.գ.թ., դոցենտ Ս. Բեժանյան  
06.03.2026թ.

